ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/3-12»

ք. Երևան «06» մարտի 2018թ.

Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Ա. Տանանյանի-ի, որը գործում է Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ»ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1 690 5000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[3]

8.16 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև Պայմանագիր կնքելն 2018 թվականի ընթացքում կողմերի միջև ծագած և այլ պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Ֆանարջյան 76 շ.	«Նատալի ֆարմ»ՍՊԸ
<<Արդշինբանկ >> ՓԲԸ Արաբկիր մ/ճ	Հասցե՝ ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Հ/Հ 2471202012460000	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀԿՀՀ01002804	Հ/Հ 1570005065330100
էլ. հասցե՝ nco.gnumner@gmail.com	ՀԿՀՀ 01222567
հեռ. 010 28 77 92	Հեռ./010/ 744 233
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[3] Միայն կնքը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
«06» մարտի 2018թ. կնքված
ՈՒԱԿ ԲՄՄ"ՊՁԲ 18/3 12 ծածկագրով
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ՝ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

Մասնակցի

Չափաբաժնի համարը	Գնային հարցումով նախատեսված ապրանքի անվանումը	անվանումը և առևտրանշային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը / ՀՀ դրամ	ընդհանուր գինը / ՀՀ դրամ	ընդհանուր քանակը
1	22411160	Մետոկլոպրամիդ ամպ. 5մգ/մլ 2մլ N10 "Բորիսովյան բուժպատրաստուկ ների գործարան" ՊՊԸ, 64/27, Չապայևի փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան, Բելառուս	"Բորիսովյան բուժպատրաստուկ ների գործարան" ՊՊԸ, 64/27, Չապայևի փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան Բելառուս	մետոկլոպրամիդ (մետոկլոպրամիդի հիդրոքլորիդ) metoclopramide (metoclopramide hydrochloride)դեղանյութերարկանՏմգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10, 10(1x10))	սրվակ	49,89	748 350	15000
2	22411200	Լոպերամիդ դ/պ 2մգ N10 «Բորիսովյան բուժպատրաստուկ ների գործարան» ՊՊԸ, 64, Չապայև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան, Բելառուս	«Բորիսովյան բուժպատրաստուկ ների գործարան» ՊՊԸ, 64, Չապայև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան Բելառուս	լոպերամիդ (լոպերամիդի հիդրոքլորիդ) loperamide (loperamide hydrochloride)դեղանյութերարկանՏ2մգ,բլիստերում (10(1x10), 20(2x10))	դեղահատ	8,15	24 450	3000
3	22421100	Հեպարին սրվ. 5 000ՄՄ/մլ 5մլ N1 ՍՊԸ"Ինդար"	ՍՊԸ"Ինդար" Ռուսաստան	հեպարին (հեպարին նատրիում) heparin (heparin sodium)լուծույթ ներ.ներարկման5000ՄՄ/մլ, 5մլ ապակե սրվակներ (5)	սրվակ	680	1 360 000	2000
4	22421210	Դեղնական պատրաստուկ ներարկիչ 4 000ՄՄ 0,4մլ N1 Սանոֆի Ավենտիս Ֆրանս, 1 13 թաղամաս Ռուաան Ռուանդ, 75014 Փարիզ, Ֆրանսիա	Սանոֆի-Ինթերոզ Ինդաստրի, 180, ռուտ Ֆեան Ջաուրես, 94702 Մայսոնս Ալֆորտ Սենթրալ Ֆրանսիա	էնոքսապարին (էնոքսապարին նատրիում) enoxaparin (enoxaparin sodium)լուծույթ ներարկման40մգ/0,4մլ,0,4մլ նախալցված ներարկիչներ (10(2x5))	սրվակ	1350	1 350 000	1000
5	22421350	Կորդարոն ամպ. 150մգ/3մլ N6 Սանոֆի Ավենտիս Ֆրանս, 1 13 թաղամաս Ռուաան Ռուանդ, 75014 Փարիզ, Ֆրանսիա	Սանոֆի-Ինթերոզ Ինդաստրի, 1, ռուտ դե լա Վիերգե, Ամբարես և Լագրանժ, 33565 Կարբոն Բլանկ սեդեքս, Ֆրանսիա	ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ)amiodarone (amiodarone hydrochloride)լուծույթ ներարկման50մգ/մլ,3մլ ամպուլներ (6)	սրվակ	639	159 750	250
6	22431200	Մեթիլ Բորիդոլ լուսք. 40գ «Բորիսովյան բուժպատրաստուկ ների գործարան» ՊՊԸ, 64, Չապայև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան, Բելառուս	«Բորիսովյան բուժպատրաստուկ ների գործարան» ՊՊԸ, 64, Չապայև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան Բելառուս	լևոմենթոլ, մեթիլուրացիլհիդրոքսիֆենոլ, methylurazilsum արտաքին կիրառման7,5մգ/գ -40մգ/գ, 40գ ալյումինե պարկուճ	հատ	228,8	228 800	1000
7	22431210	Դիկլոֆենակ ամպ. 25մգ/մլ 3մլ N5 Լեկիտ Բենքիզեր ԲԸ, 36, 17 բդ Պարտայեդա փ., 61115 ՌՈ Ռուսաստան	Լեկիտ Բենքիզեր ԲԸ, 36, 17 բդ Պարտայեդա փ., 61115 ՌՈ Ռուսաստան	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում)diclofenac (diclofenac sodium)լուծույթ մ/մ և ներ.ներարկման25մգ/մլ, 3մլ ամպուլներ, բլիստերում (5, 5(1x5))	սրվակ	76	912 000	12000
8	[illegible]	Լատրոպրոտիում Բեսիլատ Ներարկման 10մգ/մլ	Սզիս Պարենտերալ Պլզ. ՍՊԸ, Հնդկաստան	լատրոպրոտիում (լատրոպրոտիումի բեսիլատ)լուծույթ ներ. կաթիլաներարկման10մգ/մլ,5մլ ամպուլներ (5)	սրվակ	989	296 700	300
9	22651112	Ամոքսանցիալ սրվ. 1,2գ N5 Լեկ Տրանսպորտիկաս	Սլովենիա, Լյուբլյանա	ամոքսիցիլին (ամոքսիցիլինի տրիհիդրատ),կլավուլանաթթու (կալիումի կլավուլանատ)դեղափոշի ներարկման լուծույթի1000մգ+200մգ,ապակե սրվակ (5)	սրվակ	1050	1 050 000	1000
10	22661112	Պրոպոֆոլ Լիպուրո ամպ. ներ 20մլ 10մգ/մլ N5 Բ Բրաուն Մելսունգեն ԱԳ Գարլ. Բրաուն Շտրասսե 1, 34212 Մելսունգեն՝	Բ Բրաուն Մելսունգեն ԱԳ Գարլ. Բրաուն Շտրասսե 1, 34212 Մելսունգեն՝ Գերմանիա	պրոպոֆոլ(propofol)հիմք ներարկման10մգ/մլ, 20մլ ամպուլներ (5)՝	սրվակ	620	310 000	500

[illegible]	33661112	Թիոպենտալ նատրիում ամպ. 1գ. Կիևմեդպրեպարատ բաժն ՀԲԸ, 01032, Կիև, Մանասպանսկոգո փ., 139*	Կիևմեդպրեպարատ բաժն ՀԲԸ, 01032, Կիև, Մանասպանսկոգո փ., 139* Ուկրաինա	թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium)փոշի լիոֆիլիզացված, 1գ ներարկման լուծույթի1000մգ, ապակե սրվակ (40) *	սրվակ	2340	2 340 000	1000
[illegible]	33661116	Լիդոկայինի հիդրոքլորիդ ամպ. 10% 2մլ N10 Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ, 61013, ք. Խարկով, Ընչենկո փ., 22, Ուկրաինա	Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ, 61013, ք. Խարկով, Ընչենկո փ., 22 Ուկրաինա	լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)lidocaine (lidocaine hydrochloride)լուծույթ ներարկման20մգ/մլ,2մլ ամպուլներ(10), (10/2x5՝) և 2մլ ամպուլներ, բլիստերում (10/1x10՝)	սրվակ	82	24 600	300
[illegible]	[illegible]	Սպազմոլոն ամպ. 5մլ N10 "Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ, 64, Ձնապանի փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան*	"Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ, 64, Ձնապանի փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան* Բելառուս	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդmetamizole (metamizole sodium), pitofenone (pitofenone hydrochloride), fenpiverinium bromideլուծույթ ներարկման2500մգ/5մլ - 10մգ/5մլ - 0.1մգ/5մլ, 5մլ ամպուլներ պիտակ բանդերով (10), 5մլ ամպուլներ, բլիստերում (10/2x5)*	սրվակ	139 99	139 990	1000
46	33661126	Սիքաստն (Դիազեպամ) ամպ. 0.5% 2մլ N10 ՍՍԳ "Զդորովյե նարոդու" ՍՊԸ, 61013, Խարկով, Ընչենկո փ	ՍՍԳ "Զդորովյե նարոդու" ՍՊԸ, Մեչնիկովի փ., 41, Խարկով Ուկրաինա	լուծույթ ներարկման 5մգ/մլ, ամպուլներ 2մլ	սրվակ	73	73 000	1000
48	33661142	Դիազեպամ ամպ. 0.05% 1մլ N10 Դարնիցա դեղագործական ֆիրմա ՍՊԸ, 02093, Կիև, Բորիսպոլսկայա փ., 13*	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՍՊԸ, 02093, Կիև, Բորիսպոլսկայա փ., 13* Ուկրաինա	նեոստիգմին (նեոստիգմինի մեթիլսուլֆատ) neostigmine (neostigmine methylsulfate)լուծույթ ներարկման0.5մգ/մլ,1մլ ամպուլներ, բլիստերում (10, 10/2x5՝)*	սրվակ	37.49	18 745	500
52	33671125	Կալցիումի քլորիդ ամպ. 10% 10մլ N10 Դարնիցա դեղագործական ֆիրմա ՍՊԸ, 02093, Կիև, Բորիսպոլսկայա փ., 13, Ուկրաինա	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՍՊԸ, 02093, Կիև, Բորիսպոլսկայա փ., 13 Ուկրաինա	լուծույթ ներարկման 100մգ/մլ, ամպուլներ 10մլ կալցիումի քլորիդ (կալցիումի քլորիդի հեքսահիդրատ)calcium chloride (calcium chloride hexahydrate)լուծույթ ներարկման100մգ/մլ, 10մլ ամպուլներ,բլիստերում (10/2x5՝)	սրվակ	69.22	17 305	250
55	33691154	Օմնիպան 250 սրվ. 50մլ N1 Գե Հելթեր ԱԳ, Նիկոլերին 1-2, Պ.Օ. Բոքս 4220 Նիւրպեր, ԼՕ 0401 Օսլո, Նորվեգիա	Գե Հելթեր Բրազիլիա, ՊԱԿ Բիվնես Պարկ, Խարիգտոնիլ Քռ. Կորպ Նորվեգիա	յոդեքսոլ (յոդեքսոլ)լուծույթ ներարկման755մգ/մլ (350մգ յոդ/մլ), 50մլ ապակեպնակ 22հկ	292	7300	1 460 000	200
[illegible]	33691176	Նիմոտոպ լուծույթ 22հկ 50մլ Բայեր Շերինգ ԱԳ, Պ 13342 Բերլին, Գերմանիա	Բայեր Շերինգ ԱԳ, Պ 51368, Լևերկուզեն Գերմանիա	նիմոդիպինհիդրոքլորիդ կապսուլներով մեն10մգ,50մլ,50մլ ապակե սրվակ	սրվակ	4770	143 100	30
[illegible]	[illegible]	Գլյուտոն լուծույթ 20% 50մլ Բրոֆարմա	Բրոֆարմա Ուկրաինա	մարդու ալբումին լուծույթ կաթիլաներարկման200մգ/մլ,50մլ ապակեպնակ 22հկ	292	15490	3 872 500	250
69	33691176	Սորբիֆեր Դուրուլես դժ N50 Եգիպտ	Եգիպտ ԱԲԸ, Հունգարիա	երկաթի սուլֆատ, ասկորբինաթթու ferrous sulfate, ascorbic acidդեղահատեր բազմաբաղադրիչ320մգ-60մգ,ապակե տարայում (30, 50)	դեղահատ	33.98	339 800	10000
71	33691176	Կո տրիմոքսազոլ դժ 480մգ N20 «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, Ձնապանի փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան, Բելառուս	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, Ձնապանի փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան Բելառուս	սուլֆամեթոքսազոլ, տրիմեթոպրիմ sulfamethoxazole, trimethoprimդեղահատեր400մգ-80մգ, բլիստերում (20/2x10՝)	դեղահատ	10,99	21 980	2000
72	33691176	Հեպարին լուծ 25գ Նիժֆարմ ԲԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ՊԱՏ 459, Ս	Նիժֆարմ ԲԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ՊԱՏ 459, Ս Ռուսաստան	հեպարին (հեպարին նատրիում), բենզոկային, բենզիլ նիկոտինատheparin (heparin sodium), benzocaine, benzyl nicotinateքսուք արտաքին կիրառման100ՄՄ/գ - 40մգ/գ - 0,8մգ/գ,25գ ալյումինե կամ պլաստիկե պարկում	հատ	600	60 000	100
73	33691176	Կետորոլակ դժ 1մլ N30 Բելմեդպրեպարատի ՀՊԸ, 220007, Մինսկ, Խաբիբուլինա փ., 30, Բելառուս	Բելմեդպրեպարատ ի ՀՊԸ, 220007, Մինսկ, Խաբիբուլինա փ., 30 Բելառուս	կետորոլակ (կետորոլակի ֆումարատ)ketorolac (ketorolac fumarate)դեղահատեր10մգ,բլիստերում (10՝/1x10՝, 30/3x10՝)	դեղահատ	5,49	54 900	10000

74	2369126	Ռազամանյան ներանձնական քսուք գել-նսեցող 40գ «Բորիսովյան բուժաբուսաբանական նպեր գործարան» ՓԲԸ, ՀՀ	«Բորիսովյան բուժաբուսաբանական նպեր գործարան» ՓԲԸ, ՀՀ, Բելաստա	կեչու խեժ, ընտրությամբ birch tar, «ազատարմատանամանոկ30մգ/գ - 30մգ-գ, 40գ ապրանքի պարկում	հատ	306	91 800	300
76	2369176	Տաք Հենա լուծույթ ամա. 10մլ N20 Տաք Հենա	Ինստիտուտ Շուլի, Ռու Ռեսե Ընտերը «Լիլ Վերտ» Ֆրանսիա	երկաթ (երկաթի գլյուկոնատ), մանգան (մանգանի գլյուկոնատ), պղինձ (պղնձի գլյուկոնատ) iron (iron gluconate), manganese (manganese gluconate), copper (copper gluconate)լուծույթ ներքին ընդունման50մգ/10մլ- 1,33մգ/10մլ- 0,7մգ/10մլ,10մլ ամպուլներ (20/2x10/)	սրվակ	112,5	33 750	300
84	2369202	Դեքսոն ամա. 250մգ 2մլ N50 ԼԵԿ Ֆարմասյութիքալս դ.գ., Վերովսկոյե փ. 57, 1526 Լ.	ԼԵԿ Ֆարմասյութիքալս դ.գ., Վերովսկոյե փ. 57, 1526 Լ. Սլովենիա	Էտամզիլատ etamsylatetրուծույթ ներարկման250մգ/2մլ, 2մլ ամպուլներ (50)	սրվակ	167	1 670 000	10000
85	2369202	Դեքսոն դ/ի 250մգ N10 ԼԵԿ Ֆարմասյութիքալս դ.գ., Վերովսկոյե փ. 57, 1526 Լ.	ԼԵԿ Ֆարմասյութիքալս դ.գ., Վերովսկոյե փ. 57, 1526 Լ. Սլովենիա	Էտամզիլատ etamsylateդեղահատեր250մգ, բլիստերում (100/10x10/)	դեղահատ	43,99	87 980	2000
90	2369226	Տրամադոլ ՀՆ դ/ա 50մգ N20 «ՀՄԴՀ «Հայրենիք նարդու» ՍՊԸ (61013, Ռուսկով, Ճկնեկ	«ՀՄԴՀ «Հայրենիք նարդու» ՍՊԸ (61013, Ռուսկով, Ճկնեկ Ուկրաինա	տրամադոլ խորհրդանիշի հիդրոքլորիդ) tramadol (tramadol hydrochloride)դեղապատիճներ50մգ, բլիստերում (10/1x10/, 20/2x10/)	դեղահատ	31	15 500	500
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ						x	16905000	x

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Տաևարջյան 76 շ.

«Արդշինբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ

ՀՎՀՀ01002804

հեռ. 010 28 77 92

«Նատալի Ֆարմ»ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան,Տիչինա 3 րդ նրբ. 2/2

Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570005065330100

ՀՎՀՀ 01222567

Հեռ./010/ 744